ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բոլոր այն մարդիկ, որոնք Բիսմարկի պաշտօնավարութեան ժամանակ աշխատում էին նորան ներկայացնել որպէս միակ մարդ, որից իբր կախուած է դրութեան այս կամ այն մտքով փոփոխութիւնը, այսօր ստիպուած են խոստովանելու, որ նոքա սխալուած են։ Եւ մանաւանդ մամուլի այն մասը, որը Բիսմարկի պաշտօնավարութեան ժամանակ նրան վերագրում էր ամենասատանայական դիտումներ և ներկայացնում նորան իբր ժամանակիս յաւաջդիմութեան ամենամեծ խոչընդոտը,—այսօր, փոխելով իւր լեզուն, որպէս վայել է անխելք և անաղնիւ մամուլին, զարմանում է գտնում Բիսմարկի մասին պատմել նոր առասպելներ, բայց ոչ թէ նորան չար դև ներկայացնելու համար, այլ նորա անունը սիրելի և ժողովրդական դարձնելու համար։—Այդ տեսակ մամուլի դատողութիւններին չը պէտք է հաւատ ընծայել առհասարակ, լինին այդ դատողութիւնները նպաստաւոր, թէ աննպաստ, որովհետև գլխաւորը ընթերցողների համար այն է, որ իրերի դրութիւնը ներկայացնի իւր իսկական լոյսով։ Իսկ մեր ակնարկած մամուլը, յեղաշրջած դատողութիւններ տալով քաղաքական անձնաւորութիւնների մասին, միշտ ստիպուած է նաև իրերի իսկական դրութիւնը յեղաթիւրել և կեղծ բացատրութիւններ տալ։

Այսպէս, օրինակ, եւրոպական միլիտարիզմը, այսինքն կանգուն զօրքերի մշտական աճումը վերագրում էր Բիսմարկին, փոխանակ այդ բանը վերադրելու քաղաքական ընդհանուր պայմաններին, այն պայմաններին, որոնց տեղականութիւնը ամենևին չի կապուած նորա հետ, թէ Բիսմարկ իւր պաշտօնում կը մնայ թէ ոչ։

Եւ ահա, այժմ, Բիսմարկի հեռանալուց յետոյ, գերմանական երիտասարդ կայսեր առաջի մեծ քայլից յետ՝ վերաբերեալ բանւորա-

կան խնդրին, յաջորդեց միւսը, վերաբերեալ գերմանական զօրքին, որը, նոր զինուորական առաջարկութեան համաձայն, սկսած է զգալապէս ուժեղացնուի։ Ներկայ թուականի փետրուարին ընարուած նոր ռէյխս-տագը (Գերմանիայի պատգամաւորների ժողովը կամ պարլամենտը) պէտք է քննէր այդ օրինագիծը։ Եւ ոչ մի կասկած չը կայ, որ այդ օրինագիծը կ'ընդունուի, չը նայած որ ներկայ ռէյխս-տագի կազմը, որպէս յայտնի է, շատ աննպաստ է համարուում կառավարութեան։

Այդ նոր զինուորական օրինագծի վերայ մենք առանձնապէս կանգ չենք առնիլ, որովհետև նորա նշանակութեան գնահատումը ենթադրում է ծանօթութիւն եւրոպական գլխաւոր պետութիւնների զինուորական դրութեան հետ, մի խնդիր, որին մենք կը դառնանք մի ժամանակ, բայց որը այժմ մեզ հեռու կը տանէր։ Ժամանակի սղութիւնը մեզ թոյլ չի տալիս այժմ մի այդպիսի յօդուած ներկայացնելու։

Եւրոպայի ներքին քաղաքական անցքերի կողմից այս մայիս ամսին ամենից շատ իւր վերայ ուշադրութիւն գրաւեց Ֆրանսիան։ Հանրապետութեան նախագահ Կարնօի ճանապարհորդութիւնը Ֆրանսիայի մէջ, նոր տոմարով ապրիլի 27-ին կատարուած ընտրութիւնները Պարիզի հտմայնքի խորհրդի համար և Բուլանժեան կուսակցութեան իսպառ ջարդելը այդ ընտրութիւններին, Աֆրիկայի մի աւազակային և բարբարոս թագաւորութեան, այն է Դահոմէյի դէմ բացուած կռիւը, մամուլի ազատութիւնը սահմանափակող օրինագծի չ'ընդունելը պատգամաւորների ժողովում, Դրէյֆուս պատգամաւորի բրոշիւրը և Ժիւլ Ֆերրի'ի գիրքը Տօնկինի մասին, — ահա՛ այն գլխաւոր խնդիրները, որոնք խօսակցութեան գլխաւոր առարկաները եղան ներկայ մայիսին։ Դոցանից առանձին յիշատակելու արժանի են Բուլանժեան կուսակցութեան ջարդելը, մայիսի 1-ի տօնը և մամուլի վերաբերեալ օրինագիծը։

Բուլանժեան շարժման մասին մենք արդէն մի երկու անգամ առիթ ենք ունեցել ընդարձակօրէն խօսելու։ Մեր ընթերցողներին ծանօթ է Բուլանժէի անձնաւորութիւնը, նորա բարձրանալու և

զարգանալու պատմութիւնը. յայտնի է նաև նորա կուսակցութեան առաջին մեծ պարտութիւնը անցեալ տարուայ սեպտեմբերին եղած պարլամենտական ընտրութիւնների ժամանակ։

Բուլանժէն, այդ ընտրութիւններին, յաղթեց գաւառներում, բայց Պարիզ քաղաքում նա ունեցաւ նշանաւոր յաջողութիւններ։ Ահա այստեղ է, որ բուլանժականութիւնը ուզում էր իւր բունը հաստատել և ապագայում գուցէ Պարիզի միջոցով, այսպէս ասած, Ֆրանսիային տիրել։ Ապրիլի 27-ին Պարիզի մայրաքաղաքը, շրջակայքով, պէտք է ընտրէր 88 հոգի ձայնաւորներ համայնական խորհրդի համար։ Եթէ այդ ընտրութիւններին Բուլանժէն կարողանար իւր կուսակիցներին ընտրել տար և դումայում մեծամասնութիւն ձեռք բերել,—այն ժամանակ Բուլանժեան կուսակցութիւնը զաւթած կը լիներ մայրաքաղաքը։ Դորա հետևանքները բացատրութեան կարօտ չեն։

Արդ, ապր. 27-ի համայնական ընտրութիւններին Բուլանժեան կուսակցութիւնը կրեց աւելի ևս մեծ ջարդ, քան անցեալ տարուայ պարլամենտական ընտրութիւններին։ 88 հոգուց բուլանժական ձայնաւորներ ընտրեցին միայն երկու հոգի։ Կուսակցութիւնը այժմ ինքն էլ խոստովանում է իւր քաղաքական ոչնչութիւնը, բայց դեռ ևս ապագայի համար յոյսերը իսպառ չի կորցնում, որովհետև մայրաքաղաքում Բուլանժեան կանգիդատներին պատկանող ընտրողների թիւը այնու ամենայնիւ հասնում է 144.000-ի։

Մայիսի 1-ին պէտք է կատարուէր մի «համաշխարհային» տօն բոլոր բանուորների։ Տեսնւած էին մեծամեծ նախապատրաստութիւններ՝ այդ տօնին քաղաքական շարժման մեծ ցոյցի բնաւորութիւն տալու համար։ Գլխաւոր կենդրոնակէտը ընտրւած էր Պարիզ քաղաքը։ Իսկ է, ցոյցեր եղան, եղան նաև փորձեր յեղափոխական շարժումների. բայց ներքին գործերի մինիստր Կոնստան'ի արի գործունէութեան շնորհիւ, որը ամէն նախազգուշական միջոցներին դիմել էր, շարժումը սահմանափակւեց և յեղափոխականները չը կարողացան իրանց նպատակին հասնել։ Կոնստան'ի ժողովրդականութիւնը դորանով աւելի ևս աճեց։ Ամենքը այժմ գիտեն, որ Կոնստան'ի ներ-

կայութիւնը մինիստրութեան մէջ ուժեղ կառավարութեան գրաւականն է։

Գալով այժմ մամուլի ազատութեան դէմ սենատում առաջարկուած և ընդունուած օրինագծին, որը պատգամաւորների ժողովը մերժեց, պէտք է ասած հետևեալը։ Թերևս ոչ մի երկրում մամուլը չի վայելում այն կատարեալ ազատութիւնը, ինչպէս Ֆրանսիայում։ Բայց և ոչ մի երկրում այդ ազատութիւնից այնքան չեն օգտուում այս և այն կառավարչական անձին վիրաւորելու, զրպարտելու, անպատուելու՝ կուսակցական շահերի համար, որքան Ֆրանսիայում։ Զրպարտուածը դիմում է դատարանին, որը դատում է ընդհանուր օրէնքների համաձայն և երդուեալ դատաւորները դատում են իրանց խղճի համաձայն։ Այդ պրոցեսները ձեռաց չեն կատարուում, այլ ինչ և իցէ ձգձգուում են։ Բացի դորանից՝ երդուեալները շատ յաճախ դատում են քաղաքական կուսակցութիւնների ազդեցութեան ներքոյ։

Այդ չարիքների դէմն առնելու համար, մանաւանդ որ քաղաքական շարժումների ժամանակ, երբ մամուլի ստոր ներկայացուցիչները, մի որոշ գործնական նպատակին հասնելու համար, չեն քաշւում և չեն վախենում ստութիւնների և զրպարտութիւնների դիմել, առաջարկութիւն եղաւ այդպիսի գանգատներով դիմել ոչ երդուեալ դատաւորներին, այլ մեղադրուածին յանձնել այսպէս կոչուած ուղղիչ պոլիցիական դատարաններին, ուր գործերը քննւում են արագ կերպով և ոստիկանական կանոններով։

Սենատը ընդունել էր այդ օրինագիծը. պատգամաւորների ժողովը մերժեց։ Կառավարութիւնը ինքը հակառակ էր սենատի օրինագծին։ Եւ ահա հիմունքը։ Մամուլի ազատութիւնը դաւել է Ֆրանսիայում մի ազգային կարևոր հաստատութիւն։ Հանրապետական կեանքի հետ սերտ կապուած է մտքի ազատ արտայայտութեան կարելիութիւնը։ Արդ, եթէ վատերին ուղղելու համար մամուլը ենթարկւի ազատութեան սահմանափակման, այն ժամանակ, մանաւանդ վատ և յետադէմ կառավարիչների օրերով, մամուլի ազատութիւնը առհասարակ վտանգի մէջ կը լինի և մամուլը ինքը կ՝ընկնի կառավարութեան ճնշման տակ։ Այս մտքով խօսեց պատգա-

մաւորների ժողովում Դեշանէլ, յայտնի պրոֆեսորը, մինչդեռ նորա հակառակորդն էր Ռէյնախ, դեռ ևս երիտասարդ՝ բայց ներկայ հրապարակախօսների մէջ փայլուններից մէկը, հանգուցեալ Գամբետտայի բարեկամը։ Օրինագիծը չ'ընդունեց, մանաւանդ այժմ, երբ Ֆրանսիան նորևրում ապացուցեց, որ զրպարտութիւններով և դեմքամացիայով զանազան բուլանժէներին չի յաջողիլ ազգի մեծամասնութեան խաբել, երբ կառավարութիւնը ինքը իւր պաշտօնը կը կատարի, որպէս օրէնքը այդ թոյլ է տալիս և պահանջում։

Z.